

Manoogian Simone Research Fund (MSRF)

Թեմա. Մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ցուցիչների համակարգը որպես մարզի/երկրի համաչափ զարգացման ապահովման գործիք

1. Հիմնախնդրի նկարագրությունն ու դրա արդիականությունը

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվում են քայլեր մայրաքաղաքի և ՀՀ մարզերի միջև զարգացման անհամաչափությունները մեղմելու ուղղությամբ, այնուամենայնիվ խնդիրը մնում է արդիական և օրակարգային և պահանջում հայեցակարգային և ռազմավարական լուծումներ: Ընդ որում խնդիրն առկա է ոչ միայն մայրաքաղաքի և մարզերի միջև, այլ նաև հենց մարզերում:

Երբեմն ընդունվող որոշումները կրում են օպերատիվ բնույթ և նախատեսված են օպերատիվ խնդիրների լուծման համար, կամ նույնիսկ ընդունվող թվայնացման հեռանկարային որոշումները չեն ապահովում մարզի և երկրի մակարդակով ի սկզբանե դրված ցանկալի արդյունքները: Պատճառը, թերևս, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող և գնահատող ցուցիչների համակարգի բացակայությունն է կամ, միգուցե, առկայության դեպքում որպես որոշումների ընդունման գործիքակազմ կիրառելու բացակայությունը:

2. Հետազոտության նպատակը և դրա հնարավոր ազդեցությունը համապատասխան քաղաքականության մշակման վրա

Մշակել ցուցիչների համակարգ, որը Հայաստանի Հանրապետության կոնկրետ տեղեկատվության հիման վրա օպտիմալ կերպով կհամակցի

- մարզերի և համայնքների առկա վիճակի դինամիկ գնահատումը,

Manoogian Simone Research Fund (MSRF)

- տարբեր ցուցանիշներով և սինթետիկ համաթվով արտահայտված յուրաքանչյուր մարզի/համայնքի անհավասարության ցուցիչի հաշվարկը մեկ այլ մարզի/համայնքի կամ կենտրոնի նկատմամբ,
- հաշվարկների արդիականությունը, հասանելիությունը և պարզությունը:

Այս համակարգի կիրառությունը հնարավորություն կտա ապահովելու մարզային և համայնքային ռազմավարություններով սահմանված նպատակների և գերակայությունների իրագործմանն ուղղված որոշումների օբյեկտիվությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դրանց վերանայման օբյեկտիվությունը: Արդյունքում մարզի կտրվածքով՝ դրված ցուցիչների շրջանակում դրական դինամիկայով արդյունքների ապահովումը կհանգեցնի մարզի ներսում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և որպես արդյունք անհամաչափությունների մեղմմանը:

3. Հետազոտության մեջ ուսումնասիրվելիք կոնկրետ խնդիրներն ու հարցադրումները

Վերհանել ՀՀ-ում կիրառվող սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ցուցիչները, միջազգային պրակտիկայում կիրառվող ցուցիչների համակարգը և առաջարկել մարզերում կիրառելի, օբյեկտիվ և համաչափ զարգացման գնահատման և ապահովման տեսանկյունից առավել արդյունավետ ցուցիչների համակարգ, այդ թվում տալով դրանց ներդրման ֆինանսական ընդհանրական գնահատականը:

4. Հետազոտությունից ակնկալվող արդյունքը

Ունենալ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը բնութագրող և գնահատող ցուցիչների համակարգ, որը հնարավորություն կտա և հիմք կհանդիսանա մարզի կտրվածքով, ինչու չէ նաև երկրի մակարդակով, ընդունել այս կամ այն ոլորտի

Manoogian Simone Research Fund (MSRF)

գարգացմանն ուղղված որոշումներ, որոնց վերջնականատակը կլինի մարզի և երկրի համաչափ սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը: